

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ COVID-19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, ՋՀԿ, սահմանափակումներ, սցենար, COVID-19*

COVID-19 համաճարակը չափազանց մեծ վնաս է հասցրել զբոսաշրջության ոլորտին: 2020 թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, միջազգային զբոսաշրջիկների թիվն աշխարհում կրճատվել է 65%-ով կամ 440 մլն-ով: Հաշվի առնելով փակ սահմանները և ճանապարհորդելու սահմանափակումները՝ ՋՀԿ-ն կանխատեսում է, որ այս տարի զբոսաշրջային այցելությունները, ընդհանուր առմամբ, կնվազեն 58-78%-ով: Իհարկե, աշխարհի տարբեր երկրներ արդեն իսկ հանել են միջազգային զբոսաշրջիկների համար նախատեսված որոշ սահմանափակումներ և տարբեր միջոցառումներ են կիրառում ոլորտի աջակցության նպատակով: ՀՀ կառավարությունը նույնպես նախաձեռնել է զբոսաշրջության ոլորտի աջակցման ծրագրեր, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել օդային ճանապարհով ՀՀ մուտք գործելու սահմանափակումների առումով: Այս տարվա առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դեպի ՀՀ միջազգային զբոսաշրջիկների թիվը կրճատվել է մոտ 60%-ով: Եթե առաջնորդվենք ՋՀԿ սցենարներով և կատարենք համապատասխան հաշվարկներ, ապա ՀՀ-ի դեպքում ներգնա զբոսաշրջիկների թիվը 2020 թ. կկազմի 416763-795638 մարդ: Հողվածում առկա են մի շարք առաջարկներ՝ միտված ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության խթանմանը:

COVID-19 համաճարակը ի թիվս տնտեսության այլ բնագավառների, չափազանց մեծ վնաս է հասցրել նաև զբոսաշրջության ոլորտին: Դեռևս



Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հեփազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: 90-ից ավելի գիտական հրատարակումների, այդ թվում՝ երկու մենագրության հեղինակ է և երեք ուսումնական ձեռնարկի համահեղինակ:


2020 թ. մարտի սկզբին Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը կանխատեսել էր զբոսաշրջիկների թվի՝ 1-3%-ով նվազում (2019 թ. 1461 մլն-ի փոխարեն, 2020 թ.՝ 1416-1446 մլն մարդ) աշխարհում, ինչի հետևանքով վերջիններիս կողմից կատարվող ծախսերի կորուստը հաշվարկվում էր 30-50 մլրդ եվրո¹: Ավելի ուշ ԶՀԿ-ն թարմացրեց իր կանխատեսումը, ըստ որի՝ 2020 թ. միջազգային զբոսաշրջային այցելությունները կկրճատվեն 20-30%-ով, իսկ զբոսաշրջային եկամուտները՝ 300-450 մլրդ ԱՄՆ դոլարով: Որպես համեմատական՝ նշվում էր, որ 2003 թ. SARS-ի (ատիպիկ թոքաբորբի) բռնկման հետևանքով միջազգային զբոսաշրջային այցելությունների նվազումն ընդամենը 0.4% էր, իսկ 2009 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով՝ 4%²:

Համաձայն ԶՀԿ տվյալների՝ 2020 թ. ապրիլի 28-ի դրությամբ աշխարհի բոլոր երկրներում կիրառվել են ճանապարհորդության սահմանափակումներ: Մասնավորապես՝ երկրների.

- 45 տոկոսն ամբողջությամբ կամ մասնակիորեն փակել է իր սահմանները զբոսաշրջիկների համար. «ուղևորներին թույլ չեն տալիս մուտք գործել»,

- 30 տոկոսն ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցրել (հետաձգել) է միջազգային չվերթերը. «բոլոր չվերթերը դադարեցված են»,
- 18 տոկոսն արգելել է մուտքը որոշ երկրների կամ այդ վայրերի տարանցիկ ուղևորների համար,
- 7 տոկոսը կիրառել է տարբեր միջոցառումներ, ինչպիսիք են կարանտինը կամ ինքնամեկուսացումը 14 օրով և մուտքի արտոնագրային սահմանափակումներ³:

2020 թ. մայիսի սկզբին ԶՀԿ-ն հրապարակեց առաջին եռամսյակի տվյալները. այսպիսով՝ զբոսաշրջային այցելությունների թիվը կրճատվել էր 22%-ով (ընդ որում, միայն մարտ ամսին՝ 57%-ով), ինչը նշանակում էր 2019 թ. առաջին եռամսյակի համեմատ 67 մլն-ով քիչ այցելություններ և 80 մլրդ ԱՄՆ դոլարով պակաս եկամուտ: Հաշվի առնելով փակ սահմանները և ճանապարհորդելու սահմանափակումները՝ ԶՀԿ-ն դիտարկեց երեք սցենար՝ ըստ հուլիսի, սեպտեմբերի և դեկտեմբերի ժամանակահատվածների, համաձայն որոնց՝ զբոսաշրջային այցելությունները 2020 թ.



ԳՇԱՊԱՏԿԵՐ 1

Միջազգային զբոսաշրջային այցելություններն աշխարհում և 2020 թ. սցենարները, մլն մարդ

¹ Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020: <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf>
² International tourist arrivals could fall by 20-30% IN 2020, <https://www.unwto.org/news/international-tourism-arrivals-could-fall-in-2020>
³ COVID-19 related travel restrictions, a global review for tourism, second report as of 28 April 2020, 1-16 pp., <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/TravelRestrictions%20-%2028%20April.pdf>

կնվազեն 58-78%-ով: Ըստ առաջին սցենարի՝ եթե ազգային սահմանները բացվեն և ճանապարհորդելու սահմանափակումները հանվեն հուլիսի սկզբին, ապա զբոսաշրջային այցելությունների անկումը տարվա կտրվածքով աշխարհում կկազմի 58%, ըստ երկրորդ (սեպտեմբերի սկզբին) և երրորդ (դեկտեմբերի սկզբին) սցենարների, համապատասխանաբար՝ 70% և 78%⁴:

Ըստ վերոնշյալ սցենարների՝ 2020 թ. զբոսաշրջային այցելություններն աշխարհում կարող են կրճատվել 850-1140 մլն-ով՝ կազմելով 320-610 մլն: Հարկ է նշել, որ այս կանխատեսումները հիմնված են երկրների՝ ազգային սահմանների բացման հնարավորությունների վրա, ուստի անընդհատ կարող են փոփոխվել:

ԶՀԿ-ն նշել է նաև զբոսաշրջությունից ստացվող եկամուտների կրճատման համապատասխան սցենարներ՝ 62-79%-ով կամ 910-1170 մլրդ ԱՄՆ դոլարով, այսինքն՝ միջազգային զբոսաշրջությունից եկամուտ-

ները կարող են կազմել 310-570 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 1,5 տրլն ԱՄՆ դոլարի դիմաց: Կազմակերպության հաշվարկների համաձայն՝ զբոսաշրջության 100-120 մլն ուղղակի աշխատատեղ կորստի վտանգի առջև է⁵:

Հարկ է նշել, որ ԶՀԿ Վստահության ինդեքսը (UNWTO Confidence Index) կրճատվել է և հունվար-ապրիլի գնահատումների (13 միավոր), և մայիս-օգոստոսի (25 միավոր) կանխատեսումների մասով (2003 թ.-ից մինչ օրս ամենացածր գնահատականները)⁶:

Ըստ ԶՀԿ տվյալների՝ 2020 թ. հուլիսի 19-ի դրությամբ երկրների 40 տոկոսը նվազեցրել է միջազգային զբոսաշրջության սահմանափակումները, մասնավորապես՝

- 115 երկիր շարունակում է լրիվ փակ պահել իր սահմանները միջազգային զբոսաշրջության համար,
- 87 երկիր նվազեցրել է միջազգային զբոսաշրջության սահմանափակումները, ընդ որում, 4-ն՝ ամբողջությամբ, իսկ 83-ը՝ մասնակիորեն: Այդ երկրներ-



Source: World Tourism Organization (UNWTO) ©

ԳԾԱՊԱՏԱԿԵՐ 2

Միջազգային զբոսաշրջային այցելությունների փոփոխությունները 2019-2020 թթ. հունվար-հունիսին⁷

⁴ UNWTO World Tourism Barometer May 2020 Special focus on the Impact of COVID-19 (Summary), pp. 1-24, <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-05/Barometer%20-%20May%202020%20-%20Short.pdf>

⁵ Նույն տեղում:

⁶ Ինդեքսը հաշվարկվում է ԶՀԿ փորձագետների հարցումների հիման վրա՝ նպատակ ունենալով պարզելու վերջիններիս կարծիքներն իրենց երկրներում զբոսաշրջային գործունեության վերջին չորս ամիսների վերաբերյալ և ամրագրելու նրանց կանխատեսումները գալիք չորս ամսվա համար (գնահատվում է 0-200 միավոր սանդղակով, շատ վատ՝ 0, վատ՝ 50, նույնը՝ 100, լավ՝ 150, շատ լավ՝ 200): Հարցերը հետևյալն են՝ «Ինչպե՞ս եք գնահատում զբոսաշրջային գործունեությունը ձեր դեստինացիայում վերջին չորս ամսում՝ համեմատած տվյալ ժամանակահատվածի համար ձեր սպասելիքների հետ», և «Ինչպիսի՞ն են ձեր դեստինացիայում զբոսաշրջային գործունեության կանխատեսումները գալիք չորս ամսվա համար՝ համեմատած այն բանի հետ, որ տվյալ ժամանակահատվածի համար դուք տրամաբանորեն ակնկալում էիք»: Աղբյուրը՝ World Tourism Barometer, Volume 18, Issue 4, July 2020 Update, UNWTO, p. 1-3, <https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.4>

⁷ World Tourism Barometer, Volume 18, Issue 4, July 2020 Update, UNWTO, p. 1-3, <https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.4>

րից 41-ը (26-ը՝ Շենգենյան գոտու) Եվրոպայում է, 20-ը՝ Ամերիկայում, 13-ը՝ Աֆրիկայում, 10՝ Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, 3-ը՝ Մերձավոր Արևելքում⁸:

2020 թ. սեպտեմբերին հրապարակվեց ԶՀԿ-ի Համաշխարհային զբոսաշրջության բարոմետրը, ըստ որի՝ 2020 թ. հունվար-հունիս ամիսներին միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն աշխարհում կրճատվել է 65%-ով կամ 440 մլն-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ զբոսաշրջային այցելություններից եկամուտները կրճատվել են 460 մլրդ ԱՄՆ դոլարով: Հունիս ամսին միջազգային զբոսաշրջային այցելությունների կրճատումը կազմել է 93%⁹:

Սույն թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ, հաշվի առնելով առկա միտումները, ԶՀԿ-ի կողմից մայիսին մշակված սցենարներից (միջազգային զբոսաշրջային այցելությունների 58-78% կրճատման հետ կապված), առավել հավանական է դիտարկվում երկրորդ սցենարը, այն է՝ 70% կրճատում: Շատ երկրներ դեռ փակ են պահում իրենց սահմանները, որոշներն էլ ուժեղացրել են ճանապարհորդության սահմանափակումները՝ կապված հիվանդության նոր բռնկումների հետ: ԶՀԿ-ի կողմից նաև 2021-2024 թթ. կտրվածքով որոշ սցենարներն են դիտարկվում՝ հաշվի առնելով որոշ գործոններ՝ ճանապարհորդելու սահմանափակումների աստիճանաբար վերացումը, զբոսաշրջիկների վստահության բարելավման տեմպը և տնտեսական պայմանները: Ըստ այդմ՝ 2.5-4 տարի կտևի, որպեսզի վերականգնվի միջազգային զբոսաշրջային այցելությունների 2019 թ. ցուցանիշը¹⁰: Ըստ առաջին սցենարի՝ 2019 թ. ցուցանիշի վերականգնումը կլինի 2.5 տարի հետո՝ 2023 թ. կեսերին, ըստ երկրորդ սցենարի՝ 3 տարի հետո՝ 2023 թ. վերջին, և ըստ երրորդ սցենարի՝ 4 տարի հետո՝ 2024 թ. վերջին: Ըստ ԶՀԿ-ի՝

ոլորտի վերականգնումը կսկսվի 2021 թ.-ից, սակայն 2021 և 2022 թթ. զբոսաշրջային այցելությունների ցուցանիշը դեռևս ցածր կլինի 2019 թ. արձանագրված ցուցանիշից¹¹:

Հարկ է նշել նաև, որ տարբեր երկրներում իրականացվում են զբոսաշրջության ոլորտի աջակցության տարաբնույթ միջոցառումներ: Ըստ ԶՀԿ տվյալների՝ 220 երկրից 167-ը հատուկ միջոցներ է ձեռնարկել ճգնաժամի հետևանքները մեղմելու և ոլորտի վերականգնումն արագացնելու համար: Ավելի քան 144 երկիր ներդրել է հարկաբյուջետային և դրամավարկային գործիքներ, 100-ը իրականացնում է աշխատատեղերի պահպանման և վերապատրաստման քաղաքականություն: Այս համատեքստում իրականացվում են նաև պետություն-մասնավոր համագործակցության, շուկայի հետազոտման, զբոսաշրջության վերսկսման, ներքին զբոսաշրջության խթանման միջոցառումներ: Բերենք մի քանի օրինակներ՝ ըստ երկրների: Նորվեգիան ուղևորատար տրանսպորտի, կացության օբյեկտների ԱԱՀ-ն 12-ից նվազեցրել է մինչև 8%: Եգիպտոսը զբոսաշրջային բոլոր օբյեկտների հարկերի վճարումը հետաձգել է մինչև ոլորտի վերականգնումը, իսկ երկրի կենտրոնական բանկը զբոսաշրջային կազմակերպություններին ցածր տոկոսադրույքով վարկեր է առաջարկում՝ աշխատողների աշխատավարձի վճարման համար: Բելգիայում, Կամերունում, Թուրքիայում, Իսլանդիայում, Ուզբեկստանում զբոսաշրջային հարկը կասեցվել կամ վճարումը հետաձգվել է: Սերբիան, Սլովենիան, Սլովակիան ուղղակի վճարումներ են տրամադրում այն կազմակերպություններին, որոնք հարկադրված փակվել են համավարակի պատճառով: Շուկայի հետազոտման նպատակով տարբեր երկրներ (Ալբանիա, Հայաստան, Չիլի, Էստոնիա, Հունգարիա, Իրան, Պորտուգալիա, Շվեյցարիա և այլն) իրականացրել են հարցումներ ոլորտի կազմակերպությունների շրջա-

⁸ COVID - 19 RELATED TRAVEL RESTRICTIONS A GLOBAL REVIEW FOR TOURISM, Sixth Report as of 30 July 2020, Prepared by UNWTO Sustainable Development of Tourism Department, pp. 2-3, <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-07/200730-travel-restrictions.pdf>

⁹ World Tourism Barometer, Volume 18, Issue 5, August/September 2020, UNWTO, p. 1, <https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.5>

¹⁰ Սույն տեղում:

¹¹ Սույն տեղում:

նում: Ներքին զբոսաշրջության խթանման նպատակով ընտանիքներին զբոսաշրջային վաուչերներ են տրամադրվում Իտալիայում, Իսլանդիայում, Լիտվիայում: Միջազգային զբոսաշրջության խթանման և ներքին զբոսաշրջության զարգացման նպատակով մարքեթինգային արշավներ են կազմակերպվել Վրաստանում, Հունգարիայում, Իսլանդիայում, Իսրայելում, Մեքսիկայում, Թաիլանդում, Նոր Զելանդիայում և այլն¹²:

Իսկ ինչ վիճակ է ներկայում ՀՀ զբոսաշրջության ոլորտում:

Նախորդ վերլուծականներում¹³ արդեն անդրադարձել ենք մարտի կեսերից ՀՀ-ում կիրառվող սահմանափակումներին, կառավարության աջակցության ծրագրերին, փակ սահմանների պարագայում՝ ներքին զբոսաշրջության խթանման կարևորությանը և այլ հարցերի:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների՝ 2020 թ. հունվար-հունի-

սին ՀՀ է ժամանել 311264 միջազգային զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 770055-ի համեմատ: Ընդ որում, սույն ցուցանիշը ձևավորվել է 2020 թ. հունվար-մարտ ժամանակաշրջանի տվյալներով, քանի որ 2020 թ. ապրիլ-հունիս ժամանակաշրջանում, ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 16-ի N²⁹⁸-Ն որոշման համաձայն, երկրում ներգնա զբոսաշրջային այցելություններ չեն արձանագրվել¹⁴:

Եթե դիտարկենք վճարային հաշվեկշռում ճանապարհորդության և մարդատար տրանսպորտով զբոսաշրջության հետ կապված ծառայությունների (զբոսաշրջային ծառայությունների) կրեդիտի թվերն ըստ եռամսյակների (աղյուսակ 2), ապա կտեսնենք, որ 2019 թ. առաջին եռամսյակում ՀՀ ներգնա զբոսաշրջիկները միջինում ծախսել են 737, երկրորդ եռամսյակում՝ 784, 2020 թ. առաջին եռամսյակում՝ 730 ԱՄՆ դոլար (տվյալները ստացվել

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թիվը 2018-2019 թթ., մարդ¹⁵

	2019 Q1	2019 Q2	2019 Q3	2019 Q4	2020 Q1	2020 Q2
Ժամանել են ուղևորներ, որոնք, ըստ ՀՀ-ի մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկներ	364,489	405,566	689,097	435,225	311,264	-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ վճարային հաշվեկշռի որոշ ցուցանիշներ, 2019-2020 թթ., մլն ԱՄՆ դոլար¹⁶

	2019 Q1	2019 Q2	2019 Q3	2019 Q4	2020 Q1
Ճանապարհորդության և մարդատար տրանսպորտով զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	32.4	47.0	64.1	-42.2	20.8
<i>կրեդիտ</i>	268.7	317.8	564.6	383.8	227.3
<i>դեբետ</i>	236.3	270.9	500.4	426.0	206.6

¹² How are countries supporting tourism recovery? UNWTO briefing note – Tourism and Covid-19, Issue 1, June 2020, pp. 1-28, <https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/9789284421893>

¹³ Թովմասյան Գ., Ինչպիսին էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2019 թվականին, և ինչ սպասել 2020 թ. «կորոնավիրուսային համաճարակում», <https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context> <https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context>, Թովմասյան Գ., ՀՀ ներքին զբոսաշրջության խթանման անհրաժեշտությունը ներկա պայմաններում, <https://asue.am/amberd/publication/analytics/the-need-to-promote-domestic-tourism-in-the-current-conditions-1>, Թովմասյան Գ., «COVID-19»-ի ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի վրա. աշխարհ և Հայաստան, էջ 73-80, ԱՄԲԵՐԴԻ տեղեկագիր, 2020-1, <https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf>

¹⁴ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին, էջ՝ 137, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_421.pdf

¹⁵ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2019-2020 թթ., <https://www.armstat.am/>

¹⁶ ՀՀ վճարային հաշվեկշիռ, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

են՝ ըստ եռամսյակների կրեդիտի թվերը բաժանելով ներգնա զբոսաշրջիկների քանակի վրա):

2019 թ. երկրորդ եռամսյակում զբոսաշրջային ծառայություններից ստացված գումարը 317,8 մլն ԱՄՆ դոլար է, և քանի որ 2020 թ. երկրորդ եռամսյակում միջազգային զբոսաշրջիկներ չեն եկել, համապատասխանաբար՝ այդ ժամանակահատվածում նույնքան դոլարի փասա ենք կրել:

Բնականաբար, միջազգային զբոսաշրջիկների բացակայությունից տուժում են ոլորտի կազմակերպությունները: Ու թեև ամռան ամիսներին նկատվում էր ներքին զբոսաշրջության ակտիվացում, ոչ բոլոր զբոսաշրջային գործակալություններն են պատրաստ զբաղվելու նման գործունեությամբ, հատկապես, որ այս շրջանում նկատվել է գների անկում: Բացի այդ, շատ զբոսաշրջիկներ նախընտրում են սեփական մեքենայով գնալ տարբեր վայրեր մեկօրյա հանգստի՝ առանց գիշերակացի: Միաժամանակ, Երևանում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտները միջազգային զբոսաշրջիկների բացակայության պատճառով հայտնվել են ծանր ֆինանսական վիճակում, ի տարբերություն մարզերի ՀՏՕ-ների, որտեղ հանգստանում են ներքին զբոսաշրջիկները:

ՀՀ կառավարությունը օգոստոսի 13-ին ընդունեց կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառումը, որի նպատակն է օժանդակություն տրամադրել զբոսաշրջությանն ուղակիորեն առնչվող որոշակի ոլորտների տնտեսավարողների՝ վերջիններիս ֆինանսական խնդիրները մեղմելու, գործունեության շարունակականությունն ապահովելու և առկա աշխատատեղերը պահպանելու նպատակով: Նման որոշումը հիմնավորվում է հետևյալ կերպ. կորոնավիրուսի տարածման, զբոսաշրջային հոսքերի նվազման, տնտեսական գործունեության որոշ տեսակների նկատմամբ կիրառված սահմանափակումների հետևանքով զբոսաշրջության, կացության և հանրային

աննդի ոլորտներում գրանցվել է իրացման շրջանառության շուրջ 70 տոկոս անկում: Ըստ այդմ՝ նախատեսվում է ամսական դրամաշնորհի տրամադրում ՀՀ տարածքում պետական գրանցում ստացած՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ չհանդիսացող այն իրավաբանական անձանց կամ հաշվառված անհատ ձեռնարկատերերին, որոնք ստեղծվել են մինչև 2020 թ. մարտի 31-ը, միջոցառման շրջանակում տրամադրվող աջակցության ամսվա ընթացքում ունեցել են առնվազն 3 աշխատող, 2020 թ. առաջին եռամսյակի կամ այդ եռամսյակում ընդգրկված որևէ ամսվա համար ներկայացված ԱԱՀ և ակցիզային հարկի միասնական հաշվարկի և (կամ) շրջանառության հարկի հարկային հաշվարկով տնտեսավարողի գործունեության առնվազն 50 տոկոսը վերաբերել է հետևյալ ոլորտներին՝ կացության կազմակերպում, հանրային սննդի կազմակերպում, զբոսաշրջային գործակալությունների և օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջային ոլորտի այլ ծառայություններ, առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ: Կառավարության այս որոշման շահառու հանդիսանալու ժամանակահատվածն է 2020 թվականի հուլիսից մինչև 2021 թվականի մարտը ներառյալ¹⁷:

ՀՀ կառավարության 2020 թ. օգոստոսի 12-ի 1319-Ն որոշմամբ հանվեց օդային ճանապարհով օտարերկրյա քաղաքացիների մուտքի արգելքը և սահմանվեց, որ ՀՀ տարածք մուտք գործելիս անձն ինքնամեկուսանում է 14-օրյա ժամկետով, որի ընթացքում նա կարող է անցնել կորոնավիրուսային հիվանդության ախտորոշման ՊՇՌ հետազոտություն, որի բացասական պատասխանի դեպքում անձը դուրս է գալիս ինքնամեկուսացումից¹⁸: Այնուհետև Զվարթնոց միջազգային օդանավակայանում բացվեցին թեստավորման մի քանի լաբորատորիաներ, որտեղ ժամանող զբոսաշրջիկները կարող են հանձնել թեստը և պատասխանը ստանալ հաջորդ օրը:

¹⁷ Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներեքերորդ միջոցառումն ուղղված է զբոսաշրջության ոլորտի խնդիրների լուծմանը, <https://mineconomy.am/news/2109>

¹⁸ ՀՀ կառավարության 2020 թ. օգոստոսի 12-ի 1319-Ն որոշում, <https://www.e-gov.am/gov-decrees/item/34569/>

2020 թ. հոկտեմբերի 31-ին կառավարության որոշմամբ փոփոխություն կատարվեց ՀՀ մուտք գործելիս ինքնամեկուսացման և թեստ հանձնելու ընթացակարգում, և սահմանվեց, որ ՀՀ տարածք մուտք գործելիս կարելի է ներկայացնել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման հետազոտության բացասական արդյունքը հավաստող, առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ, իսկ եթե չի ներկայացվում այդ սերտիֆիկատը, ապա անձը ենթակա է ՊՇՌ հետազոտության համար նմուշառման՝ օդանավակայանում կամ ցամաքային սահմանի անցման կետում տեղակայված նմուշառման կետերում և պարտադիր ինքնամեկուսացման՝ մինչև ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքի ստացումը¹⁹: Սույն փոփոխությունը շատ կարևոր էր, որպեսզի զբոսաշրջիկը կարողանա ներկայացնել իր երկրում արված թեստի բացասական պատասխանը, ինչպես աշխարհի տարբեր երկրներում է: Հակառակ դեպքում, զբոսաշրջիկի համար անարդյունավետ կլիներ գալ Հայաստան և ինքնամեկուսանալ 14 օր, կամ հանձնել այստեղ թեստ, քանի որ արդյունքը կարող է լինել դրական և արդեն իսկ իր զբոսաշրջային հանգիստը կխաթարվի: Ընդ որում, արդեն մի շարք երկրներում կիրառվում է ազատ մուտքի հնարավորություն որոշակի երկրներից ժամանող զբոսաշրջիկների համար, ովքեր առանց թեստի բացասական պատասխանի, առանց ինքնամեկուսացման պահանջի կարող են հանգիստ մուտք գործել այդ երկրներ: Կարևոր է նաև, որ որոշ երկրների (օրինակ՝ Իսպանիա, Պորտուգալիա, Իտալիա, Վրաստան) զբոսաշրջային պաշտոնական կայքէջերում առկա են համապարփակ տեղեկություններ երկիր մուտք գործելու կանոնների, առկա սահմանափակումների, երկրի ներսում անհրաժեշտ գործողությունների, ինչպես նաև զբոսաշրջային տարբեր

ենթակառուցվածքների և միջոցառումների կազմակերպման մասին՝ հանրային սննդի կետեր, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, տրանսպորտ, զբոսաշրջային գործակալություններ, թանգարաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, լողափեր, կինոթատրոններ, փառատոններ և այլն²⁰: Համեմատության համար նշենք, որ ՀՀ զբոսաշրջային պաշտոնական կայքէջում²¹ տեղադրված է ՀՀ կառավարության օգոստոսի 12-ի 1319-Ն որոշմամբ սահմանվող՝ դեպի ՀՀ օդային ճանապարհով մուտք գործելու ընթացակարգը: Կարծում ենք՝ ինչպես վերոնշյալ երկրներում, մեզանում նույնպես, ներկայացվող տեղեկատվությունը հարկ է ընդլայնել՝ ներառելով զբոսաշրջային տարբեր ընկերությունների գործունեության անվտանգ կազմակերպման գործող պահանջները, երկրում առկա սահմանափակումները քաղաքացիների և զբոսաշրջիկների համար (օրինակ՝ դիմակ դնելու պահանջը համապատասխան վայրերում), զբոսաշրջային տարբեր միջոցառումների անցկացման կարգը և այլն:

Միաժամանակ, անչափ էական է ներքին զբոսաշրջության խթանման աշխատանքի իրականացումը տարբեր ուղղություններով (մարքեթինգային միջոցառումների անցկացում համացանցում, տարբեր տեսակի տուրփաթեթների մշակում՝ ներառելով զբոսաշրջության տարատեսակները՝ ռեկրեացիոն, կրոնական, դեպի սրբավայրեր ուխտագնացության, էկո-, ագրո-, գաստրոնոմիական, սպորտային, արկածային, իրադարձային և այլն)՝ չբավարարվելով ոլորտում արձանագրված ներկայիս ակտիվությամբ:

ՀՀ-ում առկա են մեծ գրավչությամբ բազում ռեսուրսներ, որոնց հիման վրա կարող են զարգանալ զբոսաշրջության տարբեր տեսակներ, մինչդեռ համապատասխան կազմակերպությունները հիմնականում գոլազրույց են արդեն հայտնի դար-

¹⁹ ՀՀ կառավարության 2020 թ. հոկտեմբերի 31-ի 1756 - Ն որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, <https://www.e-gov.am/gov-decrees/item/34990/>

²⁰ Tourism restarts in Italy, <http://www.italia.it/en/useful-info/tourism-restarts-in-italy.html>, COVID-19 | Measures implemented in Portugal, <https://www.visitportugal.com/en/node/421175>, COVID-19: measures to ensure tourists' safety, <https://www.spain.info/en/discover-spain/practical-information-tourists-covid-19-travel-spain/>, HOW TO EXPLORE GEORGIA NOW: COVID-19 RESOURCES AND UPDATES, <https://www.exploregeorgia.org/covid>

²¹ COVID-19 Traveler Information, <http://armenia.travel/en/covid19-traveler-information>

ծած և մեծ պահանջարկ վայելող ուղղությունները: Տարբեր մարզերի և համայնքների ռեսուրսների օգտագործմամբ զբոսաշրջային առաջարկ և համապատասխան երթուղիներ մշակելը կնպաստի և՛ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանը, և՛ կիսթանի ներքին ու ներգնա զբոսաշրջության զարգացումը նաև հետագա տարիներին: Ներքին զբոսաշրջությունը կարելի է խթանել նաև գործնական զբոսաշրջության միջոցով՝ տարբեր մարզերում կազմակերպելով միջոցառումներ և գիտաժողովներ:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ներքին զբոսաշրջության խթանման համար կարելի է նաև որոշակի գումարի սահմաններում հատուկ վաուչերներ տրամադրել բազմազավակ, սոցիալապես անապահով ընտանիքներին և նրանց, ում ամսական եկամուտը նվազագույն աշխատավարձի չափ է (օրինակ՝ Իսլանդիայում 18 տարին լրացած բոլոր անձանց տրամադրվում է 34 եվրո²²): Վերջիններս այդ վաուչերները կարող են ծախսել զբոսաշրջային տուրփաթեթների գնման, հյուրանոցային տնտեսության օբյեկտներում գիշերակացի համար:

Իսկ միջազգային զբոսաշրջության վերականգնման համար կարևորվում է ագրեսիվ մարքեթինգային միջոցառումների իրականացումը: Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ համավարակի

ընթացքում սոցիալական ցանցերով և համապատասխան կայքէջերով իրականացվում են մարքեթինգային լայնածավալ միջոցառումներ՝ սահմանափակումների թուլացումից կամ վերացումից հետո միջազգային զբոսաշրջիկների մեծ հոսք ապահովելու նպատակով: Մեր երկրի համար նույնպես ներկա պայմաններում չափազանց կարևոր են միջազգային զբոսաշրջային շուկայում տեղ գրավելը, նոր առաջարկներ ներկայացնելը, կայքէջերում և սոցցանցերում ակտիվ մարքեթինգային արշավների կազմակերպումը:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ միջազգային զբոսաշրջիկների թվի կրճատումը շատ մեծ կլինի աշխարհում (ըստ ԶՀԿ սցենարների՝ շուրջ 70%, հաշվի առնելով նաև այն, որ երկրների մեծ մասում համավարակի տարածման նոր ալիք է սկսվել և սահմանափակումները կրկին խստացվել են): Եթե ՀՀ-ի համար, ըստ ԶՀԿ վերջին սցենարների, համանման հաշվարկներն կատարենք, այդ ցուցանիշը կլինի 58-78%: Հետևաբար՝ ՀՀ ներգնա զբոսաշրջիկների քանակը 2020 թ. կկազմի 416763-795638 մարդ: Մնում է հուսալ, որ վարակի տարածման տեմպերը կնվազեն, և 2021 թ. զբոսաշրջության ոլորտը կսկսի աստիճանաբար աշխուժանալ՝ վերականգնելով աճի տեմպերը և նախորդ տարիների ցուցանիշները:

²² Government sends out vouchers to spend on domestic travel, <https://turisti.is/2020/03/government-sends-out-vouchers-to-spend-on-domestic-travel/>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Գ., Ինչպիսին էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2019 թվականին և ինչ սպասել 2020 թ. «կորոնավիրուսային համատեքստում», <https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context>
2. Թովմասյան Գ., ՀՀ ներքին զբոսաշրջության խթանման անհրաժեշտությունը ներկա պայմաններում, <https://asue.am/amberd/publication/analytics/the-need-to-promote-domestic-tourism-in-the-current-conditions-1>
3. Թովմասյան Գ., «COVID-19»-ի ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի վրա. աշխարհ և Հայաստան, էջ 73-80, ԱՄԲԵՐԴ տեղեկագիր, 2020-1, <https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf>
4. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներեքերորդ միջոցառումն ուղղված է զբոսաշրջության ոլորտի խնդիրների լուծմանը, <https://mineconomy.am/news/2109>
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին, էջ 137, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_421.pdf

6. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2019-2020 թթ., <https://www.armstat.am/>
7. ՀՀ վճարային հաշվեկշիռ, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>
8. ՀՀ կառավարության 2020 թ. օգոստոսի 12-ի 1319-Ն որոշում, <https://www.e-gov.am/gov-decrees/item/34569/>
9. ՀՀ կառավարության 2020թ. հոկտեմբերի 31-ի 1756 – Ն որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, <https://www.e-gov.am/gov-decrees/item/34990/>
10. COVID-19 | Measures implemented in Portugal, <https://www.visitportugal.com/en/node/421175>
11. COVID-19: measures to ensure tourists' safety, <https://www.spain.info/en/discover-spain/practical-information-tourists-covid-19-travel-spain/>
12. COVID - 19 related travel restrictions, a global review for tourism, second report as of 28 April 2020, 1-16 pp., <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/TravelRestrictions%20-%2028%20April.pdf>
13. COVID - 19 RELATED TRAVEL RESTRICTIONS A GLOBAL REVIEW FOR TOURISM, Sixth Report as of 30 July 2020, Prepared by UNWTO Sustainable Development of Tourism Department, pp. 2-3, <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-07/200730-travel-restrictions.pdf>
14. COVID-19 Traveler Information, <http://armenia.travel/en/covid19-traveler-information>
15. Government sends out vouchers to spend on domestic travel, <https://turisti.is/2020/03/government-sends-out-vouchers-to-spend-on-domestic-travel/>
16. How are countries supporting tourism recovery? UNWTO briefing note – Tourism and Covid-19, Issue 1, June 2020, pp. 1-28, <https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/9789284421893>
17. HOW TO EXPLORE GEORGIA NOW: COVID-19 RESOURCES AND UPDATES, <https://www.exploregeorgia.org/covid>
18. Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020: <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf>
19. International tourist arrivals could fall by 20-30% IN 2020, <https://www.unwto.org/news/international-tourism-arrivals-could-fall-in-2020>
20. Tourism restarts in Italy, <http://www.italia.it/en/useful-info/tourism-restarts-in-italy.html>
21. UNWTO World Tourism Barometer May 2020 Special focus on the Impact of COVID-19 (Summary), pp. 1-24, <https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-05/Barometer%20-%20May%202020%20-%20Short.pdf>
22. World Tourism Barometer, Volume 18, Issue 4, July 2020 Update, UNWTO, <https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.4>
23. World Tourism Barometer, Volume 18, Issue 5, August/September 2020, UNWTO, <https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.5>

Гаяне ТОВМАСЯН

*Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук*

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

КАК ВОССТАНОВИТЬ ТУРИЗМ В УСЛОВИЯХ COVID-19?

Пандемия COVID-19 нанесла огромный ущерб туристическому сектору. В январе-июне 2020 г. количество иностранных туристов в мире уменьшилось на 65% или 440 миллионов по сравнению с аналогичным периодом прошлого года. Учитывая закрытые границы и ограничения на поездки, ВТО рассматривает три сценария, согласно которым в 2020 году туристические посещения снизятся на 58-78%. Разные страны мира уже снизили ограничения для иностранных туристов, приняв различные меры для поддержки туристического сектора. Правительством Республики Армения приняты меры по поддержке туристического сектора, а также внесены изменения в плане ограничений на въезд в Республику Армения воздушным путем. В первом полугодии 2020г. количество международных туристов в Армении снизилось примерно на 60% по сравнению с тем же периодом прошлого года. Если руководствоваться сценариями ВТО и сделать соответствующие расчеты, то в случае с Арменией количество прибывающих туристов в Республику Армения в 2020г. составит 416763-795638 человек. В статье представлены предложения по продвижению въездного и местного туризма в Армении.

Ключевые слова: туризм, ВТО, ограничения, сценарий, COVID-19

